

մէջն Փրկչին ընդունելու համար: Երեխաները, զօր օրինակ, խաչ հանելու ժամանակ մատները միացնում են, հետեապէս ծանօթ են կրօնագիտութեան դասընթացի վերջաւորութեան հետ արտաքին կողմանէ: Արօնուսոյցը չի կարող բոլորովին մոռանալ իւր աշակերտների տեղեկութեանց մասին: Աւստի և անհետեղականութիւն չի լինել նորա կողմից, եթէ հէնց առաջին դասերից նա երեխաներին հասկացնէ մատներ միացնելը և խաչ հանելը, այսինքն քիչ խօսքերով կը պատմէ Աստուածային երկց անձանց մասին և Յիսուս Քրիստոսի խաչուելու և մահուան մասին: Արբաղան պատմութեան անցքերը, որոնք կարողէին իբրեւ հիւթ ծառայել վերոյ յիշած ճշմարտութիւնները պարզելու համար, ապագայումն առիթ կը տան աւելի լիակատար կերպով ուսումնասիրելու այդ ճշմարտութիւնները: Արօնուսոյցին թող չբռնկուին յարձակմունքները կարծեցեալ անհետեղականութեան մասին, երբ առաջին դասերումն խօսում են կուրսի վերջին դասերումն ուսուցանելի անցքերի նշանակութեան մասին: Դորա հետ և չի հարկաւոր մոռանալ, որ բացի ուսումնարանական կրօնական ուսուցմանից կայ և կրօնական ուսուցումն քրիստոնէական ընտանիքի՝ եկեղեցու մէջ: Աւսումնարանի խնդիրն է ուշադրութիւն դարձնել ընտանիքի և եկեղեցու ազդեցութեան վերայ և աւելի լիակատար կրօնական ձև տալ դաստիարակութեան:

Գ. ԵՐԶՆԿԵԱՆ:

ՈՍԿԵՄԱԹՐ - ՏԻՐԱՄԱԹՐ.

(Դարբնաց - Բար և Հողուց չանք)

Անձեացի Անձեացիք

Թողնում Պաղատն ու պինդ Վանգուար,

Հայր Արամազդն ու սէր-Աստղիկ,

Թողնում գալիս են Դարբնաց - Բար,

Դարբնաց - Բարին բարձր կանգուն

Պայ Անահայ ոսկի պատկեր—

Գիշեր - ցերեկ զիմաց ոսկուն

Շարժում են հոն հզօր ձեռքեր:

Շարժում են միշտ ածում կռան,

Եւ շրկալաւ երկաթ ծեծում

Ահագնագոռ սայլի վրան

Եւ ծեծելիս չորս դին հեծում:

Հեծեծումէ դողում քարը,

Եւ արձագանք բերում-տանում:

Դղորդն ընկնում ողջ աշխարհը,

Եւ խուռն ամբոխ ոտքի հանում:

Եւ խուռն ամբոխ Անձեացիք

Թողնում Պաղատն ու պինդ Վանգուար,

Հայր Արամազդն ու սէր Աստղիկ,

Թողնում գալիս են Դարբնաց - Բար:

Դարբնաց - քարին պսակ հիւսում

Մեծ բարերար Ոսկեմօրը,

Եւ նրանից կեանք են ուզում,

Աւ բողբոլում շուրջ բողբոլը:

Ու բոլորում բռնում են պար
Ոսկեծնի կռքի չորս գին—
Սալը թնդումէ անդադար
Ու չափ տալիս ժողովրդին—
Եւ ժողովուրդը կարաւում
Ու կեանք հայցում Ոսկեմօրից.—
Եւ Դարբնացի քուրան վառում,
Մարբում ակտերն ակտաւորից. . . .

—
Եւ մինչ ամբոխն անումէ պար,
Եւ մինչ թնդումէ դոռ սալը,
Ահա գալիս է Դարբնաց Քար
Քարգուղիմէ անաքեալը.

Նա գալիս է լսնած ձեռին
Փայտի պատկերը Տիրամօր,
Եւ հէնց հասնումէ պատկերին
Աստուածանոյշ մեծ Ոսկեմօր.

Ոսկի պատկերն ընկնումէ վար,
Լռում յանկարծ զնդանը դու,
Դադրում ձեռքերը կռանահար,
Եւ շուրջ ամբոխն աղշում բոլոր.

Եւ մոթ տրից ահա դեւեր,
Հսկաները կռանահար . . .
Սարն ի վեր են ելնում դեւեր,
Եւ կատաղած նայում խոնարհ.

Եւ գոռում են դռում . . . վրէժ . . .
Խառնաղանձին հանում սարսափ,
Եւ խիստ լինումն քարավէժ,
Ժայռեր ձգում թանձրատարափ.

Խառնաղանձը անցնում իրար.—
Իսկ առաքեալը անխռով
Ելնումէ վերը Դարբնաց Քար,
Խաչակներում սուրը պատկերով.

Խաչակներումէ բոլոր գին,
Խաչի նշանն ամբառնում վեր
Յոյց է տալիս ժողովրդին,
Ու չքանում են սե - դեւեր.

—
Դարբնաց - Քարին բարձր կանգնած
Կայ սուրը պատկերը Տիրամօր.
Գիշեր - ցերեկ նրա զիմաց
Հաւաքումն շատ ուխտաւոր.

Շատ ախտաւոր Հոգւոց վանում,
Ու կեանք ուզում Տիրամօրից.
Եւ Տիրամայրը հոգ տանում,
Ցաւը սրբումէ բոլորից.

Մ. Աբեղեան.